

## ՄԵԾ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ՄԱՍՆԻԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հայաստանում Չինաստանի դեսպանատան նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանում բացվեց «Չինաստանի բարեփոխումներին և բաց քաղաքականության 40-ամյակին՝ պատմական տարեթվեր եւ ձեռքբերումներ» թեմայով լուսանկարչական ցուցահանդեսը: Բացմանը ներկա էին Հայաստանում ՉԺՀ-ի դեսպանի գործերով ժամանակավոր հավատարմատար Ճոու Հոնյոուն, դեսպանատան աշխատակիցներ, հյուրեր ՀՀ-ում տարբեր դեսպանատներից, ՀՀ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, Կոնֆուցիուսի կենտրոնի աշխատակիցները, ուսանողներ, գրադարանի ընթերցողները և պարզապես այցելուներ, որոնք հետաքրքրված են չինական մշակույթով:

Պաշտոնական բացման ժամանակ ներկաներին ողջունեցին Հայաստանում ՉԺՀ-ի դեսպանի գործերով ժամանակավոր հավատարմատար Ճոու Հոնյոուն և Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հրաչյա Սարիբեկյանը: Վերջինս իր խոսքում նշեց, որ սա իր պաշտոնավորման ժամանակ ՀՀ-ում Չինաստանի դեսպանատան հետ առաջին համագործակցության փորձն է, բայց նախնական համաձայնությամբ գործակցությունը շարունակական է լինելու: Մասնավորապես սեպտեմբերին կկազմակերպվի Ազգային գրադարանում պահվող չինարեն 350 գրքերի ցուցահանդեսը: «Շատ ուրախ եմ, որ այսօր մենք հնարավորություն ունենք Հայաստանի ազգային գրադարանում գետեղել մի ամբողջ Չինաստան, և ինչպես չինացի իմ սիրելի հեղինակներից մեկի՝ Յուան Ցզիի նովելներից մեկի վերնագիրն է՝ «Մեծը ամփոփել փոքրի մեջ»», - նշեց Հրաչյա Սարիբեկյանը:

Հայաստանում ՉԺՀ-ի դեսպանի գործերով ժամանակավոր հավատարմատար Ճոու Հոնյոուն կարևորեց դեռևս «Մետաքսի ճանապարհի» դարաշրջանից եկող հայ-չինական բարեկամական հարաբերությունների ամրապնդումը և վստահություն հայտնեց, որ Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությանը ուղղված

հետագա քայլերը նոր հնարավորություններ կբացեն հայ-չինական համագործակցության ընդլայնման համար:

Բացման արարողությունից հետո ցուցահանդեսի այցելուները շրջեցին Ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի ցուցասրահներում, ծանոթացան ներկայացված ավելի քան հարյուր լուսանկարներին:

«Պատմական տարեթվեր», «Համագործակցություն հանուն համատեղ հաջողության», «Զարգացման բնագավառի ձեռքբերումներ» խորագրերով ցուցադրությունը բաց կլինի մեկ ամիս: Լուսանկարներն ուղեկցվում են երկլեզու մանրամասն նկարագրություններով, որոնք ուշագրավ տեղեկություններ են տալիս Չինաստանի արտադրության, մշակույթի, պատմության և այլ բնագավառների մասին:









ПОСОЛСТВО КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ В РА  
НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ФОНД «ЭФРАЙМ»

**40 ЛЕТ ПОЛИТИКИ РЕФОРМ И  
ОТКРЫТОСТИ КИТАЯ:  
РАЗВИТИЕ И ВОЗМОЖНОСТИ**

Материалы международной научной конференции  
21 ноября, 2018г.  
Ереван

ՀԻՆԱՄԱՆԻ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ  
ԵՎ ԲԱՅ ԶԱՆԱԳԱՄԱՆՈՒԹՅԱՆ 40 ՏԱՐԻ,  
ԵՎ ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միջազգային գիտնականական կոնֆերանս  
21 նոյեմբեր, 2018թ.  
Երևան

ПОСОЛСТВО КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ В РА  
НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ФОНД «ЭФРАЙМ»

**40 ЛЕТ ПОЛИТИКИ РЕФОРМ И  
ОТКРЫТОСТИ КИТАЯ:  
РАЗВИТИЕ И ВОЗМОЖНОСТИ**

Материалы международной научной конференции  
21 ноября, 2018г.  
Ереван

ՀԻՆԱՄԱՆԻ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ  
ԵՎ ԲԱՅ ԶԱՆԱԳԱՄԱՆՈՒԹՅԱՆ 40 ՏԱՐԻ,  
ԵՎ ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միջազգային գիտնականական կոնֆերանս  
21 նոյեմբեր, 2018թ.  
Երևան